

Համարը N 422 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 16.11.2004 Ստորագրման ամսաթիվը 16.11.2004 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 422

ք.Ստեփանակերտ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 35-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 53-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո ղ ու մ է.**

Հաստատել **ջրօգտագործման** թույլտվությունն այլ անձանց փոխանցելու և պայմանագրով տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐԶԱՊԵՏ

Ա.ՂԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի "16"-ի
թիվ 422 որոշման

Կ Ա Ր Գ

ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Սույն կարգով կանոնակարգվում է **ջրօգտագործման** թույլտվություն ունեցող անձի կողմից այդ իրավունքը կամ դրա մի մասն այլ անձի փոխանցելու, այդ թվում՝ վաճառելու գործընթացը, ինչպես նաև այդ գործընթացի հետ կապված հարաբերությունները:
- Ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքը կարող է փոխանցվել հետևյալ ձևերով՝
ա) գրավոր պայմանագրով՝ կողմերի ստորագրությամբ.
բ) իրավահաջորդության կարգով.
գ) ժառանգության կարգով:
- Ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի փոխանցումը, բացառությամբ իրավահաջորդության և ժառանգության կարգերի, իրականացվում է գրավոր պայմանագրով:
- Ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի՝ իրավահաջորդության կարգով փոխանցումը ձևակերպվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում՝ օրենքով սահմանված կարգով՝ իրավահաջորդի ներկայացրած փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի կրկնօրինակի հիման վրա:
- Ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի՝ ժառանգության կարգով փոխանցումը ձևակերպվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում՝ օրենքով սահմանված կարգով՝ ժառանգորդի ներկայացրած ժառանգության իրավունքի վկայականի կրկնօրինակի հիման վրա:
- Ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքն ստանձնողն այդ իրավունքի փոխանցման վերաբերյալ փաստաթղթերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում ձևակերպելու օրվանից սկսած 10-օրյա ժամկետում ներկայացնում է ջրային պետական կադաստր՝ գրանցման, հակառակ դեպքում **ջրօգտագործման** թույլտվությամբ տրված իրավունքի փոխանցումը համարվում է չձևակերպված:

ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան